ՄԻՋԻՆ ԽԱՎԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

(քանակական վերլուծություն և հիմնական բնութագրիչները)

ՄԵԼՔՈՒՄՅԱՆ ՅՈՒ. Գ.

Հասարակության կառուցվածքի և շերտավորման հիմնահարցերը, որոնք ներկայումս սոցիոլոգիայի ուսումնասիրության առարկաներից են, հետաքրքրում էին մտածողներին դեռևս հնագույն ժամանակներից. այդ հարցի շուրջ իրենց տեսական հայեցակարգերն են կառուցել Պլատոնը և Արիստոտելը: Այն արդիական է նաև այսօր, երբ Պ. Բուրդյեն, Դ. Բելլը, Ա. Ինքելսը և մյուսները քննարկում և վերլուծում են արդեն հետարդյունաբերական հասարակությունների կառուցվածքը:

Պլատոնը անտիկ հասարակության կառուցվածքի մեջ առանձնացնում էր 3 խավ՝ վերին խավ կամ վերնախավ (կառավարության անդամ իմաստուններ), միջին խավ (զինվորականներ) և ստորին խավ (գյուղացիներ, արհեստավորներ):

Արիստոտելը զարգացած հասարակության ձևավորման գործընթացում ընդգծում էր աշխատանքի բաժանման առանձնահատուկ դերը: Ըստ նրա՝ յուրաքանչյուր հասարակություն բաժանվում է երեք դասակարգերի. վերին խավը պետությունը ղեկավարող պլուտոկրատիան (plutos – հարստություն, kratos – ուժ, իշխանություն) է, միջին խավը ներկայացված էր զինվորականներով, մանր առևտրականներով և արհեստավորներով, իսկ ստորին խավը կազմում էր պրոլետարիատը, մարդիկ, ովքեր չունեն սեփականություն և լիովին կախված են այլ՝ առավել բարեկեցիկ քաղաքացիներից: Կարգուկանոնի գրավականը մեծաքանակ միջին խավն էր, որը միանգամայն տարբերվում է ժամանակակից միջին խավից, որին բնորոշ են սպառման բարձր մակարդակն ու որոշակի կենսաոճը:

Կարլ Մարքսը, մշակելով դասակարգային տեսությունը, շեշտում էր դասակարգերի միջև հակադրությունը՝ դասակարգերի տարբերակման հիմքում դնելով վերջիններիս սեփականությունը արտադրամիջոցների նկատմամբ: Նա պնդում էր՝ այդ հակադրությունը երբեք չի վերանա, սակայն անգամ ըստ մարքսիստական տեսության կողմնակից տեսաբանների՝ դասակարգային անտագոնիզմը ժամանակի ընթացքում կփոխակերպվի մշակութային և մտավոր կապիտալին տիրապետողների և չտիրապետողների միջև հակադրության:

Դասակարգային մոտեցման կողմնակից Մաքս Վեբերը առանձնացնում է չորս դասակարգ՝

- խոշոր սեփականատերեր,
- մտավորականներ, վարչական աշխատողներ և մենեջերներ,
- մանր սեփականատերեր,
- բանվոր դասակարգ:

Վեբերի տարբերակման հիմքում հետևյալ չափորոշիչներն են՝ կապիտալ, որակավորում և կրթություն: Այս կամ այն դասակարգին պատկանելը կանխորոշում է տվյալ անձի կյանքի շանսերը, սոցիա-

լական շարժունության հնարավորությունները: Վեբերը առանձնահատուկ ուշադրություն է դարձնում միջին խավի ուսումնասիրությանը: Միջին խավը, ըստ Վեբերի, ժամանակակից արևմտյան հասարակության հիմնական սոցիալական բազան և ժողովրդավարության հիմքն է: Միջին խավի սոցիալական դերը պայմանավորված է հետևյալ առանձնահատկություններով՝

• հասարակության քաղաքական կայունության պահպանման հարցում շահագրգռվածություն.

• ազատության և մարդու իրավունքների արժեքների գիտակցում.

• փոխզիջման հակվածություն և քաղաքական ծայրահեղությունները, հակասությունները հարթելու պատրաստակամություն.

• քաղաքական պահանջների զսպվածություն.

• ընտրական և այլ քաղաքական որոշումների ընդունման համեմատաբար բարձր իրազեկվածության մակարդակ:

Միջին խավն ընդգրկում է պետական ծառայողներին, մտավորականությանը, մենեջերներին, փոքր և միջին ձեռնարկատերերին, բարձր որակավորում ունեցող բանվորներին: Միջին խավի ներկայացուցիչները սովորաբար բարձրագույն կրթություն ունեն, հեղինակավոր բարձր վարձատրվող մասնագիտությունների տեր են, իսկ սեփական կենսակերպը իրենց թույլ է տալիս նույնականացնել միջին խավի հետ:

Պ. Բուրդյեն դասակարգերի հարցում բացարձակ տարբերվող նոր հայեցակարգ է առաջ քաշում: Ըստ նրա՝ Մարքսի հիմնական սխալն այն էր, որ նա իր տեսության մեջ երևակայական դասակարգերն ընկալում և ներկայացնում էր որպես իրական, իրականության մեջ գոյություն ունեցող: Իսկ Բուրդյեն, հրաժարվելով սոցիոլոգիական ռեալիզմից, ժխտում է սոցիալական դասակարգերի՝ որպես իրենց որոշակի սոցիալական և իրավական կարգավիճակն ունեցող կայուն սոցիալական խմբերի օբյեկտիվ գոյությունը: Վերջինիս կարծիքով՝ դասակարգերն օբյեկտիվ իրականությանը հատուկ երևույթ չեն: Օբյեկտիվ կապերն արտացոլում են ռեսուրսների բաշխման ոլորտում դիրքերի և կարգավիճակների միջև փոխհարաբերությունները: Իսկ այդ դիրքերը կարող են ակտիվ և արդյունավետ բնույթ ձեռք բերել սոցիալական տիեզերքում առկա սուղ ռեսուրսների յուրացման գործում: Սոցիալական տարածության մեջ սուբյեկտները տեղակայված են ըստ իրենց պատկանող տարբեր տեսակի կապիտալների հանրագումարային ծավալի և դրանում տնտեսականի և մշակութայինի հարաբերակցության: Սոցիալական տարածության մեջ դիրքով պայմանավորված կողմնորոշումները նպաստում են սուբյեկտի հարմարմանը տվյալ դիրքին: Ու. Հոֆմանը այն կոչում է «սեփական տեղի զգացողություն», որի շնորհիվ «սովորական մարդիկ» բավարարված են իրենց կարգավիճակով, իսկ մյուսները «իրենց հեռու են պահում» և «բարձր գնահատում»[1]:

[1] **Бурдье П.** *Социальное пространство и символическая власть, http://gtmarket.ru/laboratory/expertize/2006/883*

1950-ական թթ. ԽՍՀՄ սոցիալական շերտավորումն ուսումնասիրող Ա. Ինկելսը[2] առանձնացնում է հետևյալ սոցիալական խմբերը՝

- կառավարող վերնախավ,
- մտավորականության վերին խավ,
- մտավորականությունը կամ զանգվածային/շարքային մտավորականություն,
- «սպիտակ օձիքներ»,
- բանվոր դասակարգ,
- գյուղացիներ:

Տարբեր հեղինակների կողմից հասարակության շերտավորման մեկնաբանությունների դիտարկումը պարզորոշ վկայում է այն մասին, որ ժամանակի ընթացքում աճել է սոցիալական շերտերի ու դասակարգերի քանակը, փոփոխվել է հասարակության կառուցվածքը՝ դառնալով ավելի կառուցվածքային: Սակայն սոցիալական շերտերի քանակի ավելացման հետևանքով հասարակության վերին և ստորին շերտերն իրենց սոցիալական բնութագրիչների տեսանկյունից աննշան փոփոխություններ են կրել, իսկ միջին խավը ենթարկվել է էական կառուցվածքային փոփոխությունների՝ ոչ միայն առավել ընդարձակվելով, այլև դառնալով առավել բազմազան՝ դրանում ընդգրկված սոցիալական խմբերի տեսանկյունից:

Այնուամենայնիվ, Արիստոտելի առաջադրած սոցիալական շերտավորման շեղանկյունաձև կառուցվածքը արդիական է նաև մեր օրերում: Իհարկե, միջին խավի գործառույթները ժամանակակից աշխարհում էապես փոխակերպվել և համալրվել են. սպառման հասարակության մեջ միջին խավը հանդես է գալիս ոչ միայն որպես հասարակությունը կայունացնող հատված, այլև որպես շարժիչ ուժ:

Միջին խավի ծավալը պայմանավորվում է երկու գործոնով՝

1) երկրի տնտեսական զարգացման մակարդակով: Հասարակության մինչարդյունաբերական վիճակից արդյունաբերականի և այնուհետև հետարդյունաբերականի անցմանը զուգահեռ՝ աճում են միջին խավի ծավալները.

2) դասակարգային դիրքի չափման եղանակները: Միջին խավի ծավալների վերաբերյալ չափման մեթոդները տարբեր արդյունքների են հանգեցնում:

Ինչ վերաբերում է հետարդյունաբերական հասարակություններում միջին խավի ծավալներին, ապա ժամանակակից քաղաքակիրթ հասարակության կառուցվածքը մասնագետները պատկերում են մոտավորապես հետևյալ կերպ՝ հարուստները կազմում են հասարակության 5-6%-ը, աղքատները՝ 14-15%-ը, իսկ միջին խավը՝ 80%-ը[3]: Տեսաբանների պնդմամբ նման սոցիալական կառուցվածքն ապահովում է հասարակության կայունությունը: Միջին խավը, լինելով հասարակության ամենաստվար հատվածը, հասարակության մեջ

---

[2] **Inkeles A.** *One World Emerging? Convergence and Divergence in Industrial Societies, Westview Press, 1998.*

[3] *Реальная Россия: социальная стратификация современного российского общества, М., 2006, с. 15.*

կատարում է կայունացնող դեր. մի կողմից կապող օղակ է հասարակության երկու բևեռների՝ հարուստների և աղքատների միջև, իսկ մյուս կողմից ապահովում է վերջիններիս միջև բավարար սոցիալական տարածություն, որպեսզի հասարակությունը խուսափի սոցիալական բախումներից և ճգնաժամերից: Նման իրավիճակը բնորոշ է հետարդյունաբերական բոլոր հասարակություններին:

Հետխորհրդային Հայաստանի հասարակության միջին խավի սահմանման, բացահայտման և ծավալի վերաբերյալ հիմնարար հետազոտություններ չեն իրականացվել: Սակայն զանգվածային լրատվամիջոցներում միջին խավի առկայության կամ բացակայության և ծավալների փոփոխման թեման շատ հաճախ է շահարկվում (հատկապես նախընտրական շրջանում): Տարիների ընթացքում միջին խավը նկարագրող հետազոտությունների շնորհիվ պարզ դարձավ, որ միջին խավը հասարակության բավական ընդարձակ շերտն է, որը, սակայն, էապես տարբերվում է արևմտյան գրականության մեջ բնութագրված միջին խավից և՛ ծավալներով, և՛ ապրելակերպով, և՛ կենսամակարդակով: ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի 2010 թ. ուսումնական պրակտիկայի շրջանակում իրականացված հետազոտությամբ փորձ է արվել պարզել Հայաստանում միջին խավի ծավալները և կարևորագույն սոցիալական առանձնահատկությունները:

Որքան էլ զարմանալի է, հարցվածների սուբյեկտիվ ինքնանույնականացման միջոցով ստացվեց հետևյալ պատկերը (աղյուսակ 1). իրենց աղքատ են համարում հարցվածների 14.8%-ը, միջին խավի ներկայացուցիչ՝ 78.5%-ը, հարուստ՝ 6.7%-ը:

Աղյուսակ 1

Հասարակության ո՞ր խավին եք Ձեզ դասում

Աղքատ	14.8%
Միջին խավ	78.5%
Հարուստ	6.7%
Ընդամենը	100.0%

Ինչպես տեսնում ենք, էմպիրիկ հետազոտությամբ ստացված պատկերը համընկնում է տեսականորեն մոդելավորված շեղանկյունաձև հասարակության շերտավորման սխեմային: Սակայն նման իրավիճակն ավելի շատ հետազոտական հարցերի է հանգեցնում: Միջին խավի հետ իրենց ինքնանույնացնող հարցվածների նման բարձր տոկոսը դարձյալ փաստում է միջին խավի բոլոր ենթաշերտերը տարբերակելու անհրաժեշտության մասին:

Ի լրումն նախորդ հարցի՝ կարելի է հիշատակել նաև հետևյալ տվյալները՝ ըստ հարցվողների 73.1%-ի՝ ապահովված են այնպես, ինչպես իրենց շրջապատի մարդկանց մեծամասնությունը (աղյուսակ 2): Այս հարցը որոշակիորեն պարզաբանում է հասարակության կողմից միջին խավի ընկալումը՝ ապրել այնպես, ինչպես շրջապատի

Աղյուսակ 2

Ձեր կարծիքով Դուք…

Նյութապես բոլորովին ապահովված չեք	14.3%
Ապահովված եք այնպես, ինչպես Ձեր շրջապատի մարդկանց մեծամասնությունը	73.1%
Ավելի ապահովված եք, քան Ձեր շրջապատի մարդկանց մեծամասնությունը	6.9%
Հիմնականում ապահովված եք	1.1%
Այլ պատասխան	2.6%
Դժվարանում եմ պատասխանել	2.0%
Ընդամենը	100.0%

մարդկանց մեծամասնությունը, միևնույն ժամանակ գիտակցելով, որ առկա է հասարակության մի որոշակի զանգված, որ ապրում են իրենցից վատ, և նրանք, ովքեր ավելի լավ են ապրում, սակայն իրենք/իրենց ընտանիքը ապրում է այնպես, ինչպես մեծամասնությունը: Թեև այս հարցում խոսքը նյութական ապահովվածության մասին էր, այնուամենայնիվ, այն հիմնականում բնորոշում է ոչ միայն կենսամակարդակը, այլև ապրելակերպը, սոցիալական կարգավիճակը և ինքնազգացողությունը: Այդուհանդերձ, պարզ է, որ հասարակության 78.5%-ը չի կարող ունենալ նույն կենսամակարդակը և ապրելակերպը: Առաջանում է միջին խավի բազմազանության հարցը: Արդյոք խոսքը մե՞կ, թե՞ մի քանի խավերի մասին է: Այստեղ հարկ է անդրադառնալ ևս մեկ խնդրի, որը հաճախ տեսության մեջ բանավեճերի տեղիք է տալիս՝ ի՞նչ թվով (եզակի՞, թե՞ հոգնակի) պետք է եզրույթը օգտագործել՝ «միջին խա՞վ», թե՞ «միջին խավեր»: Հոգնակի թվով («միջին խավեր») օգտագործման կողմնակիցները, մասնավորապես Պ. Սաունդերսը[4] և Լ. Ա. Բելյաևան[5], ընդգծում են վերջինիս ոչ համաձին բնույթը: Մինչդեռ եզակիով օգտագործելու կողմնակիցներն ընդգծում են միջին խավի դերը՝ որպես սոցիալական և տնտեսական հասարակությունը հավասարակշռող տարրի: Երկու մոտեցումներն էլ գիտության մեջ ունեն իրենց տեղը և դերը: Հարկ է, հաշվի առնելով համատեքստը, ճիշտ կողմնորոշվել:

Որոշ հեղինակներ միջին խավը համարում են համաշխարհային պատմության մեջ եզակի երևույթ, ենթադրելով, որ նման խավ գոյություն չի ունեցել մարդկության պատմության գրեթե ողջ ընթացքում[6]: Միջին խավի հավասարակշռող գործառույթը պայմանավորված է այն հանգամանքով, որ այն բաղկացած է «սեփական ձեռքերով իրենց ճակատագիրը կերտած» մարդկանցից, որոնց համար,

---

[4] **Sounders P.** *Social Class and Stratification, L.-N.Y., 1994, p. 91.*

[5] **Бел ева Л. А.** *Среднийяслойяроссийскогояобщества:япроблемаяобретенияясоциальногоястатусая (Соц, олог, ческ, е , ссследован, , 1993, N 10, с. 13—22).*

[6] **Добреньков В. И., Кравченко А. И.** *Соц, олог, . Учебн, к, М., 2008, с. 337.*

բնականաբար, շահեկան և նպատակահարմար է այն հասարակարգի պահպանումը, որն իրենց նման հնարավորություն է ընձեռել:

Երբ խոսքը մեր հասարակության մեջ տարբեր խավերի չափաբաժնի մասին է, ապա դարձյալ ակնհայտ է, որ հարուստների վերաբերյալ հարցվողները հիմնականում միակարծիք են. հիմնական մասը (56.5%) կարծում է, որ հարուստները կազմում են մեր հասարակության մինչև 10%-ը: Իսկ ինչ վերաբերում է միջին խավի և աղքատների չափաբաժնին, ապա աղքատները հարցվողների կարծիքով կազմում են հասարակության մեջ ավելի փոքր տոկոս, քան միջին խավն է, թեև այդ տարբերությունն էական չէ (աղյուսակ 3 և գծապատկեր 1):

Աղյուսակ 3

Ձեր կարծիքով՝ Ձեր շրջապատում քանի՞ տոկոսն են կազմում…

	Աղքատները	Միջին խավը	Հարուստները
0% - 10%	19.1	11.5	56.5
11%-30%	25.8	31.1	23.0
31%-60%	28.0	31.7	8.3
61%-90%	17.6	17.2	4.6
91% և ավելի	2.6	2.2	1.5
Դժվարանում եմ պատասխանել	6.9	6.3	6.1
Ընդամենը	100.0	100.0	100.0
Մեդիանա	31-60	31-60	0-10
Մոդա	31-60	31-60	0-10

Գծապատկեր 1

Ձեր կարծիքով՝ Ձեր շրջապատում քանի՞ տոկոսն են կազմում…



Ավելի մանրամասն նկարագրելով աղքատներին՝ հարցվողների 49.3%-ը նշում է, որ Հայաստանում աղքատ են նրանք, ովքեր աշխատանք չունեն, 19.3%-ը՝ աղքատ լինելու պատճառը ծուլանալն է, 10.9%-ը՝ աղքատ են ցածր աշխատավարձ ստացողները, 6.5%-ը՝ աղքատության պատճառը ազդեցիկ կապերի բացակայությունն է: Կրթություն կամ մասնագիտություն չունենալը նույնպես նշվել է որպես աղքատությունը պայմանավորող գործոն (3.5%):

Նույնականացնելով մեր հասարակության մեջ հարուստներին՝ հարցվողների 29.5%-ը նշեց, որ Հայաստանում հարուստ են բարձրաստիճան պաշտոնյաները, 27.3%-ը՝ շատ փող ունեցողները, 25.3%-ը՝ իշխանություն, կապեր ունեցող մարդիկ: Եվ հարցվողների միայն 4.6%-ը նշեց, որ Հայաստանում հարուստ են աշխատասեր և նպատակասլաց մարդիկ: Իսկ ըստ հարցվածների 8.7%-ի՝ հարուստների թվում ճարպիկ մարդիկ են:

Հարցվողների զգալի մասը՝ 17.7%-ը, միջին խավ է համարում աշխատանք ունեցողներին, 12.9%-ը՝ կայուն եկամուտ ունեցողներին, 8.6%-ը՝ առաջնային կենսական պահանջները ապահովել կարողացողներին, 6.9%-ը՝ մանր և միջին ձեռներեցներին: Սոցիալ-մշակութային տեսանկյունից ուշագրավ է, որ հարցվողների 3.7%-ը նշել է՝ միջին խավին կարելի է դասել բարձր վարձատրվող աշխատանք ունեցողներին, իսկ 3.0%-ը՝ նրանց, ովքեր իրենց ոչնչից չեն զրկում: Հարցվածների 4.1%-ը միջին խավին դասել է նաև մտավորականությանը:

Քանի որ հետազոտության արդյունքների համաձայն՝ աշխատանքի առկայությունը պայմանավորում է միջին խավին պատկանելությունը, նպատակահարմար է հասկանալ մեր հասարակության մեջ աշխատանք գտնելու համար կարևորագույն նախադրյալները: Այդ նպատակով հարցվողներին առաջարկվել էր գնահատել առաջադրված գործոնների կարևորությունը Հայաստանում աշխատանք գտնելու համար: Այդ գործոնների մեծ մասը հարցվողները որակավորել են որպես «շատ կարևոր»: Ինչպես երևում է աղյուսակից, առաջին տեղում կրթությունն է, այնուհետև ծանոթություններն են: Իսկ սեռը և քաղաքական պատկանելությունը հայտնվել են աղյուսակի վերջին տողերում: Թեև ծանոթությունները, որպես կարևոր գործոն, երկրորդ տեղում են, այնուամենայնիվ, կրթությունը, մասնագիտական ունակությունները և աշխատանքային փորձը շատ են կարևորվել: Այդուհանդերձ, մասնագիտական որակները և հետևաբար աշխատանքի որակը կարևոր դեր են խաղում Հայաստանում (աղյուսակ 4):

Իսկ քիչ թե շատ արժանի դիրքի հասնելու համար Հայաստանում իրավիճակն այլ է (տե՛ս աղյուսակ 5): Առաջին տեղում կապերն ու ծանոթություններն են (26.7%), երկրորդ տեղում, սակայն ոչ մեծ տարբերությամբ, կրթությունը (21.1%), չնչին տարբերությամբ երրորդ տեղում փողն է (20.7%)՝ որպես Հայաստանում քիչ թե շատ արժանի դիրքի հասնելու կարևոր նախապայման: Եվ ապա, էապես առավել ցածր տոկոսներով՝ աշխատասիրությունը (12.8%), հաջողակությունը (7.8%) և նպատակասլացությունը (7.5%):

Աղյուսակ 4

Ստորև թվարկվածներից յուրաքանչյուրը որքանո՞վ է կարևոր Հայաստանում աշխատանք գտնելու համար

	Բոլորովին կարևոր չէ	Ավելի շուտ կարևոր չէ	Ավելի շուտ կարևոր է	Շատ կարևոր է	Դժվարանում եմ պատասխանել
Կրթություն	3.0%	8.0%	23.3%	64.3%	1.3%
Ծանոթություններ	3.7%	10.0%	25.2%	59.2%	2.0%
Մասնագիտական ունակություններ	3.9%	10.6%	29.9%	54.2%	1.3%
Աշխատանքային փորձ	5.4%	12.4%	27.8%	52.7%	1.7%
Ինքն իրեն ներկայացնելու շնորհք	7.2%	13.0%	33.4%	43.8%	2.6%
Արտաքին տեսքը	10.2%	14.4%	33.1%	40.1%	2.2%
Կաշառք	13.5%	24.6%	22.2%	37.6%	2.2%
Սեռ	33.0%	26.7%	23.0%	13.9%	3.5%
Այս կամ այն քաղաքական ուժին հարել	29.1%	34.7%	16.7%	12.4%	7.1%

Այսպիսով, միջին խավի ներկայացուցիչ լինելու համար անհրաժեշտ նախապայման է կայուն աշխատանք ունենալը, որն իր հերթին ձեռք է բերվում համապատասխան կրթության, մասնագիտության և որակավորման դեպքում, իսկ ահա մասնագիտական առաջընթացի խնդիրը լուծվում է հիմնականում ծանոթությունների և կապերի շնորհիվ:

Աղյուսակ 5

Ի՞նչ է անհրաժեշտ այսօր Հայաստանում քիչ թե շատ արժանի դիրքի հասնելու համար

Ծանոթություններ, կապեր	26.7%
Կրթություն	21.1%
Փող	20.7%
Աշխատասիրություն	12.8%
Հաջողակություն	7.8%
Նպատակասլացություն	7.5%
Այս կամ այն քաղաքական ուժին պատկանելը	1.7%
Ծննդավայր	0.5%
Խելացիություն	0.4%
Դժվարանում եմ պատասխանել	0.8%
Ընդամենը	100.0%

Այն փաստը, որ կայուն աշխատանքը և կայուն աշխատավարձը միջին խավի ձևավորման կայուն հիմքն են, կասկած չի հարուցում: Եվ մեր հասարակության մեջ զբաղվածության ոլորտում կայունացման միտումները և հետևաբար, միջին խավի ձևավորման և կայունացման միտումներն ակնհայտ են: Այս դրույթի լավագույն ապա

ցույց են հայաստանյան ընտանիքների հիմնական եկամտի աղբյուրների վերաբերյալ տվյալները (աղյուսակ 6):

Աղյուսակ 6

Ստորև թվարկվածներից որո՞նք են Ձեր ընտանիքի եկամտի հիմնական աղբյուրները

Հիմնական աշխատանքից ստացվող աշխատավարձ	65.1%
Միանգամյա կամ կարճաժամկետ աշխատանքների դիմաց ստացվող գումարներ	9.5%
Սեփական ձեռնարկությունից (ինքնազբաղվածությունից) ստացված շահույթ	7.6%
Սեփականությունը վարձով տրամադրելուց ստացված վարձավճար	4.3%
Տոկոսադրույքներից ստացված եկամուտներ	0.9%
Ապրանքների, այդ թվում՝ գյուղատնտեսական ապրանքների վաճառքից ստացված եկամուտ	2.6%
Արտասահմանում գտնվող բարեկամներից ստացվող դրամական օգնություն	15.4%
Հայաստանում գտնվող բարեկամներից ստացվող դրամական օգնություն	3.7%
Նպաստներ	3.9%
Կենսաթոշակները և այլ տեսակի թոշակներ	27.1%
Այլ	0.4%
Հրաժարվում եմ պատասխանել	2.8%

Ինչպես երևում է աղյուսակից, հայաստանյան ընտանիքների մեծ մասի համար հիմնական աշխատանքից ստացվող աշխատավարձը ընտանեկան եկամտի հիմնական աղբյուրն է (65.1%), 27.1%-ի համար՝ կենսաթոշակն ու այլ տեսակի թոշակները, բավական կարևոր դեր է խաղում նաև արտասահմանում գտնվող բարեկամներից ստացվող դրամական օգնությունը՝ 15.4%: Եկամտի այլ աղբյուրները զգալիորեն փոքր տոկոս են կազմում:

Ուշագրավ են նաև Հայաստանում աշխատուժի՝ ըստ տնտեսության տարբեր ոլորտների բաշխման վերաբերյալ տվյալները (աղյուսակ 7): Աշխատուժի զգալի զանգվածն ընդգրկված է կրթության ոլորտում՝ 14.2%, 12.0%-ը՝ սպասարկման, 10.4%-ը՝ առողջապահության, 7.7%-ը՝ արդյունաբերության, 7.1%-ը՝ առևտրի, 3.8%-ը՝ շինարարության, իսկ 3.8%-ը աշխատում են տեղեկատվական համակարգերի և ԶԼՄ-ների բնագավառում, 3.3%-ը՝ հասարակական կազմակերպություններում, 2.7%-ը՝ ֆինանսական ոլորտում, 2.2%-ը՝ մշակույթի, 1.6%-ը՝ կոմունալ ծառայությունների, 1.6%-ը՝ գիտության, 1.1%-ը՝ տրանսպորտի, 0.5-ական %-ը՝ սպորտի ոլորտում, ուժային կառույցներում, միջազգային կազմակերպություններում, քաղաքական կուսակցություններում ու միավորումներում:

Աշխատանքը և զբաղվածությունը կարևոր են ոչ միայն որոշակի կենսամակարդակի ապահովման առումով, այլև որոշակի ապրելակերպի ձևավորման առումով: Շատ խոսուն են այդ առումով միգրա-

Աղյուսակ 7

Զբաղվածության ոլորտը

Կրթություն	14.2%
Սպասարկում	12.0%
Առողջապահություն	10.4%
Արդյունաբերություն	7.7%
Առևտուր	7.1%
Շինարարություն	3.8%
Ինֆորմացիոն համակարգեր/ ԶԼՄ	3.8%
Հասարակական կազմակերպություններ	3.3%
Բանկեր/ ֆինանսներ	2.7%
Մշակույթ	2.2%
Կոմունալ ծառայություններ	1.6%
Գիտություն	1.6%
Տրանսպորտ	1.1%
Սպորտ	0.5%
Ոստիկանություն/զինված ուժեր	0.5%
Միջազգային կազմակերպություններ	0.5%
Քաղաքական կուսակցություններ/միավորումներ	0.5%
Այլ	26.2%
Ընդամենը	100.0%

ցիոն գործընթացների վերաբերյալ հարցվողների պատասխանները (աղյուսակ 8): Ինչ վերաբերում է արտերկիր մեկնելու հաճախականությանը, ապա ամիսը մեկ արտերկիր են մեկնում հարցված ընտանիքների 0.2%-ը, տարին մի քանի անգամ՝ 6.5%-ը, տարին մեկ՝ 7.8%-ը, մի քանի տարին մեկ՝ 10.4%-ը, միայն մեկ անգամ՝ 6.5%-ը:

Աղյուսակ 8

Ի՞նչ հաճախականությամբ են/եք Դուք/ Ձեր ընտանիքի անդամները մեկնում արտերկիր

Ամիսը մեկ անգամ	0.2%
Տարին մի քանի անգամ	6.5%
Տարին մեկ անգամ	7.8%
Մի քանի տարին մեկ անգամ	10.4%
Մեկ անգամ եմ/են մեկնել	6.5%
Երբեք չեն մեկնել	66.4%
Դժվարանում եմ պատասխանել	2.2%
Ընդամենը	100.0%

Կարևոր է նաև նշել, որ պարբերաբար արտերկիր մեկնողների հիմնական մասը՝ 17.4%-ը, մեկնում է աշխատանքային ուղևորության (աղյուսակ 9):

Աղյուսակ 9

Ի՞նչ նպատակով եք/են մեկնել

Աշխատանքային ուղևորություն	17.4%
Մշտական բնակություն	3.7%
Հանգիստ, զբոսաշրջություն	9.1%
Ուսում, վերապատրաստում	2.6%
Այցելություն հարազատներին, բարեկամներին, ընկերներին	5.9%
Այլ	1.7%

Հաջորդ հարցի պատասխանները վկայում են երկրում որոշակի միջին կենսամակարդակի կայունացման մասին: Հարցվողների 36.2%-ը, բնութագրելով ընտանիքի նյութական ապահովվածության մակարդակը, նշում է, որ «դրամը բավականացնում է բոլոր կարիքները հոգալու համար, սակայն խնայողություններ անել նրանք չեն կարող» (աղյուսակ 10): Բարձր է նաև այն հարցվողների տոկոսը, ովքեր իրենց նյութական ապահովվածության մակարդակը բնութագրում են հետևյալ կերպ՝ «դրամը բավականացնում է միայն սննդի համար»: Ծայրահեղ վատ՝ «դրամը չի բավականացնում ընդհանրապես», իրենց նյութական ապահովվածությունը բնութագրող հարցվողները կազմում են 14.5%, իսկ լավագույնս իրենց նյութական ապահովվածության մակարդակը բնութագրողները՝ «դրամը բավականացնում է ամեն ինչի համար, մենք մեզ ոչնչից չենք զրկում»՝ 7.4%: Ուշագրավ է այն հանգամանքը, որ այս տվյալները համապատասխանում են ըստ հետազոտության վերոհիշյալ տվյալների՝ մեր հասարակության մեջ աղքատների և հարուստների չափաբաժնին:

Աղյուսակ 10

Ինչպե՞ս կբնութագրեք Ձեր/Ձեր ընտանիքի նյութական ապահովվածության մակարդակը

Դրամը չի բավականացնում ընդհանրապես	14.5%
Դրամը բավականացնում է միայն սննդի համար	24.3%
Դրամը բավականացնում է ինչպես սննդի, այնպես էլ հագուստի համար, սակայն կրթական և առողջապահական ծառայություններից չենք կարողանում օգտվել	14.5%
Դրամը բավականացնում է բոլոր կարիքները հոգալու համար, սակայն խնայողություններ չենք կարողանում անել	36.2%
Դրամը բավականացնում է ամեն ինչի համար, մեզ ոչնչից չենք զրկում	7.4%
Դժվարանում եմ պատասխանել	3.0%
Ընդամենը	100.0%

Բնական է, որ հասարակության շերտավորման օրինաչափությունները և չափորոշիչները պայմանավորում են նաև հասարակության անդամների արժեհամակարգը: Եթե սոցիալական արժեք ասելով

հասկանում ենք որոշակի բացարձակ նպատակներ, գաղափարներ, իդեալներ, որոնց որպես ուղեցույց է դիտարկում հասարակությունն ամբողջությամբ, ապա արժեհամակարգն առավել անհատական և հարաբերական բնույթ է կրում: Հետազոտական տեխնոլոգիաները հնարավորություն են ընձեռում պարզելու, թե որ արժեքներն են կողմնորոշիչ հարցվողների համար տանը և աշխատավայրում, որքանով են համապատասխանում անհատական և հասարակական գաղափարները: Միջազգային ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ միջին խավի ներկայացուցիչների համար առաջնահերթ արժեքներ են «լավ կրթությունը», «լավ ունակությունները», «աշխատասիրությունը» և «ծանոթությունները»: Միջազգային միտումների հետ հայաստանյան հասարակության արժեհամակարգը համեմատելու նպատակով փորձեցինք դասակարգել հարցվողների կյանքում առավել կարևոր ոլորտներն ու արժեքները և հարցվողների պատասխանների հիման վրա ստացանք հետևյալ պատկերը: Հատկապես կարևորվում են «աշխատանքը, պաշտոնը», երկրորդ տեղում «Հայաստանի անկախությունն» է, երրորդը՝ «ազատությունը», այնուհետև «հարստությունը, բարեկեցությունը», «կրթությունը և մասնագիտությունը» և այլն (աղյուսակ 11):

Ակնհայտ է, որ հարցվողները աշխատանքը և պաշտոնը, ինչպես նաև մասնագիտություն և կրթություն ունենալը շատ են կարևորում: Սա վկայում է երկրում մշակութային կապիտալի զարգացման հասունացած անհրաժեշտության, ներուժի և առկա միտումների մասին: Մշակութային կապիտալը, որպես նոր սոցիալական դասակարգի կարևորագույն հատկություն, առաջ է քաշում Ա. Գոուլդները[7]: Նա ժամանակակից արևմտյան հասարակության մեջ առանձնացնում է երեք դասակարգ՝ կապիտալիստներ, պրոլետարիատ և նոր դասակարգ, որը առանձնանում է մշակութային կապիտալով (գիտելիքներ և որակավորում) և կրիտիկական դիսկուրսի մշակույթով (առանձնահատուկ լեզվական համախմբություն): Այս նոր դասակարգին են դասվում տարբեր որակավորում ունեցող մասնագետները՝ ճարտարագետները, մենեջերները, աուդիտորները, հաշվապահները, վարչական աշխատողները, լրագրողները, դասախոսները, ուսուցիչները և այլն: Մի կողմից Ա. Գոուլդները հակադրում է մշակութային կապիտալը դրամական կապիտալին, մյուս կողմից պնդում է, որ մշակույթը դառնում է կապիտալ, երբ դառնում է կայուն եկամտի աղբյուր: Դ. Բելլը անգամ առաջարկում է կոգնիտարիատ (կոգնիտոս հունարեն նշանակում է գիտելիք) եզրույթը: Կոգնիտարիատի ներկայացուցիչները զբաղված են մտավոր աշխատանքով, ի տարբերություն պրոլետարիատի, որի ներկայացուցիչները զբաղված են ֆիզիկական աշխատանքով: Սակայն երկուսն էլ վարձու աշխատողներ են[8]: Հիշատակելով միջին խավը նկարագրող տեսական հայեցակարգերը՝ հարկ է նշել, որ արևմտյան հասարակության միջին խավի ներկայացուցիչների համար բնութագրող են նաև այնպիսի առանձ-

[7] **Gouldner A.** *The Future of Intellectuals and Rise of the New Class. N.Y., 1979, pp. 23-26.*

[8] **Белл Д.** *Грядущее постиндустриальное общество, М., 1999.*

նահատկություններ, ինչպիսիք են պարտաճանաչ հարկերի վճարումը, սոցիալական և քաղաքական ակտիվությունը, որոշումների կայացման գործընթացում մասնակցությունը: Հաջորդիվ, աղյուսակում զետեղված տվյալների համաձայն, սոցիալական և քաղաքական ակտիվությունը, առավել ևս որոշումների կայացման գործընթացին մասնակցությունը այնքան էլ բնորոշ չեն մեր համաքաղաքացիներին, սակայն հարկերի բարեխիղճ վճարումը աստիճանաբար վերածվում է սովորական, կանոնավոր վարքագծի (աղյուսակ 12):

Իրենց սոցիալական պասիվությունը հարցվողների 40.8%-ը բացատրում է հետևյալ կերպ. «Ես չեմ մասնակցում հասարակական-քաղաքական իրադարձություններին, քանի որ չեմ հավատում, որ իմ մասնակցությունն ինչ-որ բան կփոխի», 14.7%-ը չի մասնակցում հասարակական-քաղաքական իրադարձություններին, քանի որ չունի որոշակի քաղաքական դիրքորոշում, 8.7%-ը՝ չի ցանկանում պատասխանատվություն կրել, իսկ 7.1%-ը՝ չի հետաքրքրվում, թե ինչ է տեղի ունենում երկրում, 3.7%-ը՝ այլ պատճառներ: Իսկ հասարակական-քաղաքական իրադարձություններին մասնակցող փոքրամասնությունը հետևյալ կերպ է բացատրում իր ակտիվությունը. մասնակցում է, որպեսզի արտահայտի իր քաղաքացիական կամքը և որոշակի ազդեցություն ունենա երկրի վրա (4.3%), հարկադրված է այդպես վարվելու (2.4%), մասնակցում է, քանի որ ունի որոշա- կի քաղաքացիական դիրքորոշում (4.1%), առաջնային է սեփական ընտրական իրավունքի իրացումը (5.0%), մասնակցում է, քանի որ իրեն խնդրում են ընտանիքի անդամները, ընկերներն ու ծանոթները (1.7%):

Աղյուսակ 11

Ստորև թվարկվածներից յուրաքանչյուրը որքանո՞վ է կարևոր Ձեր շրջապատի մարդկանց համար

	Շատ կարևոր է	Հիմնա-կանում կարևոր է	Հիմնակա-նում կարևոր չէ	Ընդհան-րապես կարևոր չէ	Դժվարա-նում եմ պատաս-խանել
Աշխատանք, պաշտոն	66.4%	27.3%	3.0%	2.0%	1.3%
Հայաստանի անկախություն	61.2%	23.4%	9.5%	3.7%	2.2%
Ազատություն	60.3%	29.3%	6.1%	1.7%	2.6%
Հարստություն, բարեկեցություն	60.3%	28.9%	6.3%	2.8%	1.7%
Կրթություն, մասնագիտություն	57.8%	33.7%	5.7%	1.3%	1.5%
Օրինականություն	52.9%	28.0%	11.9%	4.3%	2.8%
Կրոն/ հավատք	48.6%	35.4%	11.3%	2.4%	2.4%
Սոցիալական արդարություն	46.7%	29.1%	15.2%	4.8%	4.1%
Հավասարություն	44.6%	29.6%	18.5%	4.3%	3.0%
Սեփական հա-յացքները ազատ արտահայտելու հնարավորություն	43.3%	34.6%	13.0%	5.0%	4.1%
Ազգային ավանդույթներին հետևելը	36.7%	38.0%	19.1%	4.6%	1.7%

Սեփական երկրի հոգսերով ապրելը	17.7%	24.5%	30.4%	23.0%	4.4%

Աղյուսակ 12

Որքանո՞վ եք համաձայն հետևյալ դատողություններին

	Լիովին համա-ձայն եմ	Հիմնա-կանում համա-ձայն եմ	Հիմնա-կանում համա-ձայն չեմ	Բոլորովին համաձայն չեմ	Դժվարա-նում եմ պատաս-խանել
Բարեխղճորեն վճարում են հարկերը	34.1%	36.0%	14.8%	8.0%	7.1%
Սոցիալական ակտիվություն են ցուցաբերում	7.0%	21.5%	37.6%	21.3%	12.6%
Քաղաքական ակտիվություն են ցուցաբերում	8.7%	21.7%	39.3%	23.0%	7.4%
Մասնակցություն են ունենում որոշումների կայացման գործընթացում	7.8%	15.9%	34.1%	32.8%	9.3%

Ամփոփելով շարադրանքը՝ կարելի է եզրահանգել, որ զարգացած հետ-արդյունաբերական հասարակությունների շեղանկյունաձև կառուցվածքը, ըստ ինքնանույնականացման ցուցիչների, առկա է նաև Հայաստանում, քանի որ հարցվածների 78.5%- ը իրեն համարում է միջին խավի ներկայացուցիչ: Ընդսմին կարևոր է շեշտել, որ հայաստանյան միջին խավի բնութագրիչները էապես տարբերվում են եվրոպական հասարակությունների միջին խավի բնութագրիչներից: Մի կողմից հասարակության շերտավորման և միջին խավի ձևավորման առումով կարևոր են կրթությամբ, մասնագիտությամբ և ծանոթություններով պայմանավորված զբաղ-վածությունը, աշխատանքը և պաշտոնը, որն ապահովում է որոշակի կենսամակարդակ ու ապրելակերպ: Դա թույլ է տալիս մարդկանց համարել, որ իրենք ապրում են այնպես, ինչպես շրջապատի մարդկանց մեծամասնությունը: Իսկ մյուս կողմից այնպիսի բնութագրիչներ, ինչպիսիք են սոցիալական և քաղ աքական ակտիվությունը, որոշումների կայաց-

ման գործընթացում մասնակցությունը բոլորովին բնորոշ չեն հայաստանյան միջին խավին: Հարկ է նշել նաև, որ հարկերի բարեխիղճ վճարումը աստիճանաբար դառնում է միջին խավի ապրելակերպին բնորոշ երևույթ, սակայն այն դեռևս չի ընկալվում և չի գիտակցվում որպես հասարակության համար էական որոշումներին մասնակցության իրավունք ու գրավական:

СРЕДНИЙ КЛАСС В АРМЕНИИ

(количественный анализ и основные характеристики)

МЕЛКУМЯН Ю. Г.

Резюме

В 2010 году была сделана попытка измерения размеров среднего класса в Армении и выделения его наиболее важных социальных характеристик. На основании субъективной самоидентификации опрошенных была получена следующая картина: бедными себя считают 14.8% опрошенных, представителями среднего класса - 78.5%, а богатыми – 6.7%. Очевидно, что картина, полученная на базе эмпирических данных, совпадает с теоретической моделью ромбовидной структуры общества.

Ромбовидная структура развитого постиндустриального общества актуальна и для современной Армении, в частности в плане самоидентификационных показателей. Наряду с этим важно отметить, что характеристики среднего слоя в Армении существенно отличаются от характеристик среднего слоя развитых европейских стран. С одной стороны, с точки зрения стратификационной структуры и формирования среднего класса выделяются такие параметры, как занятость, работа и должность, которые в свою очередь являются результатом уровня образования, профессии и социальных связей, что в целом обеспечивает определенный уровень обеспеченности и образ жизни. А с другой стороны, такие характеристики, как социальная и политическая активность, участие в процессе принятия решений совершенно не свойственны среднему классу Армении.